**ՕՐԱԿԱՐԳ**
**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2023 թվականի փետրվարի 28-ի, ժամը 14:00-ի նիստի**

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2022 - 2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանը հաստատելու մասին**:

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

2. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի «Գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի N 1 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 10 - 2 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

   Առաջարկվում է որակի ապահովման բաժնի նախկին պետ Անի Արայի Հակոբյանի փոխարեն գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմում ընդգրկել որակի ապահովման բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյանին:**

3. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի «Գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի N 3 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 10 - 4 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

   Առաջարկվում է մակրոէկոնոմիկայի ամբիոնի նախկին վարիչ, տնտեսագիտության թեկնածու Կարեն Համլետի Գրիգորյանի փոխարեն գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի կազմում ընդգրկել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Սերյոժայի Ավետիսյանին:**

4. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12.01.2023, N 4 (7895)):

Զեկուցողներ՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

1) **Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոն**

**Լիանա Հայկազի Գրիգորյան՝** կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

2) **Տնտեսագիտության տեսության ամբիոն**

**Ֆիրուզա Նորայրի Մայիլյան՝** տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

3) **Վիճակագրության ամբիոն**

**Արմեն Մամիկոնի Քթոյան՝** վիճակագրության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Հավակնորդների գործերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2023 թվականի փետրվարի 22-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 13):

5. **Դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին**:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

1) **Անուշ Աշոտի Գասպարյան՝** ֆինանսական հաշվառման ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

2) **Դիանա Սիմոնի Մինասյան՝** կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

Հայցորդների գործերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2023 թվականի 2023 թվականի փետրվարի 22-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 13):

6. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականության պլանավորման, պատրաստման և հրատարակման կարգը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

7. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ասպիրանտուրայի ընդունելության և ուսումնառության, հայցորդության ձևակերպման կարգը հաստատելու** և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 29-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «ՀՊՏՀ ասպիրանտուրայում կրեդիտային համակարգով հետազոտողի կրթական ծրագիրը և ուսումնական գործընթացի կազմակերպման մեթոդական ցուցումները» ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

8. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում (արձանագրություն N 3) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսագետ» հրատարակչությունում հրատարակությունների իրականացման աշխատակարգում» փոփոխություն և լրացում կատարելու մասին:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թաթուլ Մկրտչյան**:

9. **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2022 թվականի գործունեության հաշվետվության մասին:**

Զեկուցող՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն **Դ.Ն.Հախվերդյան**:

10. **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2023 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն **Դ.Ն.Հախվերդյան**:

11. **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին և արտաքին շահառուներին 2023 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

Հետազոտական թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2023 թվականի փետրվարի 21-ի, ժամը 12:00-ի նիստում (արձանագրություն N 1):

**12.** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող **Դավիթ Արմենի Սոլկարյանի** ուսանողական իրավունքները վերականգնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

**13.** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող **Մանվել Արենի Կարապետյանի** ուսանողական իրավունքները վերականգնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

**14.** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող **Կարո Արտակի Հովհաննիսյանի** ուսանողական իրավունքները վերականգնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

**15. Ընթացիկ հարցեր:**

**1) Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ատենախոսությունների թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2023 թվականի փետրվարի 21-ի, ժամը 12:00-ի նիստում (արձանագրություն N 1):

**2)** Լեզուների ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի «Իսկ դու գիտե՞ս, որ քո խոսքը քո այցեքարտն է...»** ձեռնարկ-ուղեցույցի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ձեռնարկ-ուղեցույցը հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 10-ի ժամը 15:30-ի նիստում (արձանագրություն N 16): Այն նախատեսվում է հրատարակել հեղինակի միջոցներով:

**3)** Լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսյանի «Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ»** դասախոսությունների հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Դասախոսությունները հրատարակության են երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 17-ի ժամը 11:00-ի նիստում (արձանագրություն N 17): Այն նախատեսվում է հրատարակել հեղինակի միջոցներով:

**4) Ընթացիկ ակտիվության գնահատման մեխանիզմների փոփոխությունների մասին:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

**Գիտական քարտուղար՝** **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան